# 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

Համավարակի պայմաններում քվեարկության գործընթացն անվտանգ է:
Քվեարկության շենքում նախատեսված են վարակի տարածման բոլոր կանխարգելիչ միջոցառումները:




**Քվեարկությունն անցկացվում է ժամը 08:00-ից մինչեւ 20:00-ը**



Անցե՛ք նշմարումը ստուգելու ընթացակարգը:

Քվեարկության սենյակ մտնելուց առաջ, ձեռքերը մշակե՛ք մուտքի մոտ տեղադրված ձեռքերի ախտահանիչ հեղուկով:

Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք Ձեր անձը հաստատող փաստաթուղթը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը եւ ժամանակավորապես հանեք պաշտպանիչ դիմակը՝ նույնականացման նպատակով:



Նշմարման ստուգման ընթացակարգն անցնելուց հետո, գրանցում իրականացնողին ներկայացրե՛ք Ձեր անձը հաստատող փաստաթուղթը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրն ու ժամանակավորապես հանե՛ք պաշտպանիչ դիմակը:

Անցե՛ք նշմարման ընթացակարգ:



Գրանցում իրականացնողի սեղանի վրա դրված անհատական օգտագործման գրիչով ընտրողների ցուցակում ստորագրե՛ք Ձեր ազգանունը: Գաղտնի քվեախցիկում քվեաթերթիկը /քվեաթերթիկները լրացնելիս օգտագործե՛ք նույն գրիչը:

Ստացե՛ք գրանցում իրականացնողի կնիքով եւ ստորագրությամբ վավերացված քվեաթերթիկը /քվեաթերթիկները:

## ԳԱՂՏՆԻ ՔՎԵԱԽՑԻԿՈՒՄ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՈՒՄ /ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ՇՐՋԱԳԾԵ՛Ք ՁԵՐ ՑԱՆԿԱԼԻ ՄԵԿ ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ



Քվեախցիկից դուրս գալուց հետո, վերցրե՛ք հատուկ ծրարը եւ տեղադրե՛ք այդտեղ ծալված քվեաթերթիկը /քվեաթերթիկները:

Տեղադրե՛ք հատուկ ծրարը քվեատուփի մեջ:

Քվեարկության գործընթացում օգտագործված անհատական օգտագործման համար հատկացված գրիչը թողե՛ք հատուկ տարայի մեջ:

Քվեարկությանը մասնակցելուց հետո, դո՛ւրս եկեք քվեարկության շենքից: Քվեարկության շենքից դուրս գալու ժամանակ օգտվե՛ք մուտքի մոտ տեղադրված ձեռքերի ախտահանիչ հեղուկից:

## ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

**ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ** ընտրական տեղամասերում տեղադրվում է խոշորացնող ոսպնյակ

**ԽՈՒԼ, ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ, ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ՝** քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառ

**ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ՝** քվեաթերթիկը լրացնելու համար շրջանակ/ձեւ

**ԱՆՎԱՍԱՅԼԱԿԻՑ ՕԳՏՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ՝** քվեախցիկ հարմարեցված/մատչելի ընտրատեղամասերում

**ԿԱՅՔ-ԷՋՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ, ԽՈՒԼ ԵՎ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՄ Է ՏԵՍԱԶԱՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

ՆՈՐ ԲՈՒՀ

# ՔՈՒԹԱՅԻՍԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԲԱՑԵՑ ԻՐ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԴՌՆԵՐԸ

*Հոկտեմբերի 21-ին տոնական պայմաններում բացվեց Քութայիսիի միջազգային համալսարանը (ՔՄՀ):*



Բացման արարողությանը ներկա հասարակության ու ուսանողներին դիմեցին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Գիորգի Գախարիան, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, կրթության նախարար Միխեիլ Չխենկելին, ինչպես նաեւ Քութայիսիի միջազգային համալսարանի (ՔՄՀ) պատվավոր նախագահ, պրոֆեսոր Վոլֆգանգ Հերմանը եւ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ալեքսանդրե Թեւզաձեն:

Անցկացվեց Քութայիսիի միջազգային համալսարանի առաջին կուրսի ուսանողների երդմնակալության արարողությունը:

Կրթության նախարարության փոխանցմամբ, «ՔՄՀ»-ում ուսանողների ընդունելության չափանիշներն այսօր Վրաստանում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների թվում ամենաբարձրն է եւ համապատասխանում է Մյունհենի տեխնիկական համալսարանի ծրագրի պահանջներին: Այս տարի 1112 դիմորդ ցանկություն է հայտնել դառնալ ՔՄՀ-ի ուսանող: Համալսարանի կողմից դրված պատնեշը հաղթահարել է 245 երիտասարդ:

«Համալսարան ընդունված ուսանողների 90 տոկոսը միասնական քննություններին ՔՄՀ-ն նշել է որպես առաջին ընտրություն, իսկ ուսանողների 78 տոկոսին հաջողվել է ձեռք բերել պետական ֆինանսավորում:

Քութայիսիի միջազգային համալսարանի ուսանողներ են ինչպես միջազգային, այնպես էլ՝ ազգային մրցույթի եւ օլիմպիադայի հաղթող երիտասարդներ»,- հայտարարում են կրթության նախարարությունում:

Քութայիսիի միջազգային համալսարանը ներառում է ուսանողների եւ անձնակազմի համար կացարաններ, ակադեմիական շենքեր, գրադարան, սրճարաններ, ներքին եւ արտաքին ժամանցային տարածքներ, էլեկտրատրանսպորտ, հեծանվային ուղիներ: Համալսարանն առաջին հոսք կընդունի երեք ուղղություններով՝ մաթեմատիկա, համակարգչային գիտություններ եւ մենեջմենթ, իսկ ապագայում մասնագիտությունների թիվը կավելանա:

Բացի այդ, Քութայիսիի միջազգային համալսարանը միացել է Ցուլիխի հետազոտական կենտրոնի հետ համագործակցության պայմանագրին:

Քութայիսիի միջազգային համալսարանը կվճարի ուսանողների որոշ կատեգորիայի ուսման վարձը:

Քութայիսիի միջազգային համալսարանը հիմնադրել է Բիձինա Իվանիշվիլին, եւ նրա ընտանիքն իրականացրել է մեկ միլիարդ եվրոյի ներդրում:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ԳԱՐՈՒՆ ԱԿՈՊՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

# ՎԵՐՋԻՆ ՄՈՀԻԿԱՆԸ

Ընդամենը մեկ օր հետո՝ հոկտեմբերի 19-ին, կլրանար Գարուն Ակոպովի 97-ամյակը... Վախճանվեց Վրաստանում ճանաչված մի անձնավորություն, հայտնի մարզական լրագրող Գարուն Արտեմի Ակոպովը: Մարդիկ, ովքեր շփվում էին նրա հետ, ասացին, որ չնայած պատկառելի տարիքին, Գարուն Ակոպովը մինչեւ կյանքի վերջին օրը գտնվում էր ֆիզիկական եւ հոգեւոր լավ վիճակում, կարդում էր թերթեր, հանդիպում եւ զրուցում գործընկերների հետ, նրբանկատորեն հուշում նոր հրապարակումների թեմաներ:

Բացառիկ է Գարուն Ակոպովի ներդրումը վրաց մարզական արդի ժուռնալիստիկայի ձեւավորման գործում: Բավական է հիշել, որ նա՝ եւս մեկ ճանաչված վրաց լրագրող եւ խմբագիր Միխեիլ Կակաբաձեի հետ, Վրաստանի մարզական ժուռնալիստիկայի ֆեդերացիայի հիմնադիրն էր ու առաջին նախագահը: Բարեկամական եւ սերտ գործնական հարաբերություններով է Ակոպովը կապված ճանաչված մարզիկների, սպորտի մասնագետների, Վրաստանի եւ ոչ միայն Վրաստանի, մարզական շարժման ղեկավարների հետ:

Չորս տասնամյակի ընթացքում Գարուն Ակոպովը Վրաստանում «Սովետսկի սպորտ» եւ «Ֆուտբոլ-Հոկեյ» թերթերի սեփական թղթակիցն էր:

Թեպետ Գարուն Ակոպովը ոչ միայն առաջնակարգ մեկնաբան էր: Մանրամասն քաջատեղյակ լինելով մարզաձեւերին՝ նա իր հրապարակումներում հաճախ բարձրացնում էր հրատապ մարզական հիմնախնդիրներ, հետեւողական կերպով հասնում դրանց կարգավորմանը, ինչի համար էլ արժանիորեն վաստակել էր հանրապետության մարզական հասարակայնության հարգանքը:

Գարուն Ակոպովը ծնվել է Թբիլիսիում, 1923 թվականի հոկտեմբերի 19-ին: Սկզբիցեւեթ, կյանքն առաջադրեց իր դժվարությունները: 1937 թվականի ձերբակալություններն առնչվեցին նաեւ Ակոպովների ընտանիքին՝ հորը՝ Վրաստանի այն ժամանակվա Գերագույն դատարանի նախագահի տեղակալին, գնդակահարեցին, մորը՝ տիկին Շուշանիկին, ութ տարով ուղարկեցին ճամբարներ: Դիմակայելով բազում դժվարությունների՝ 14-ամյա պատանին համառորեն սովորում էր հաղթահարել դրանք: Նա ավարտեց դպրոցը, ապա՝ Թբիլիսիի վրացական պոլիտեխնիկական եւ ֆիզկուլտուրայի ինստիտուտները: Նրա կենսագրության հիմնական փուլերը, ինչպես նշվեց վերեւում, կապված են «Սովետսկի սպորտ» (1949-1987) թերթի եւ «Ֆուտբոլ-Հոկեյ» (1960-1978) շաբաթաթերթի հետ:

1997-2010 թվականներին Գարուն Ակոպովը գլխավորեց «Սվոբոդնայա Գրուզիա» թերթի խմբագրության մարզական բաժինը, իսկ հաջորդ տարիներին ակտիվ համագործակցում էր վրացական մարզական «Լելո» թերթի խմբագրության հետ:

«Սովետսկի սպորտ» թերթի եւ «Ֆուտբոլ-Հոկեյ» շաբաթաթերթի հատուկ թղթակցի կարգավիճակով՝ Գարուն Ակոպովը լուսաբանում էր օլիմպիական խաղերի ընթացքը Հռոմում, Տոկիոյում, Մյունհենում, Մոսկվայում, Ատլանտայում, ռեպորտաժներ էր վարում բասկետբոլի ու այլ մարզաձեւերի աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններից: Նա հեղինակ է ավելի քան 20 գրքի ու տեղեկատուների:



2011 թվականին «Ազատություն» ռադիոկայանով հնչած հաղորդումներից մեկում Գարուն Ակոպովն ասում է, որ անձամբ ինքը Վրաստանի մարզական լրագրողների այն համաստեղության ներկայացուցիչներից է, ովքեր ականատես են եղել կաշվե գնդակի այնպիսի մեծագույն վարպետների խաղին, ինչպիսիք էին Բորիս Պայճաձեն, Գայոզ Ջեջելավան, Ավթանդիլ (Բասա) Ղողոբերիձեն, Միխեիլ Մեսխին, Սլավա Մետրեւելին, Վլադիմիր Բարկաիան, ինչպիսիք այդ սերնդին փոխարինման եկած ֆուտբոլի ոչ պակաս հայտնի վարպետներ Մուրթազ Խուրցիլավան, Դաթո Ղիփիանին, Սաշա Չիվաձեն, ինչպես նաեւ մյուս սերնդի ներկայացուցիչները, ովքեր եւ ստեղծեցին վրացական ֆուտբոլի փառքը: Եվ դա իրոք այդպես է: Վերափոխելով Գարուն Ակոպովի խոսքերը՝ կարելի է ասել, որ նրա աչքերի առջեւ անցավ շատ տասնամյակների ընթացքում վրացական սպորտի փառավոր պատմությունը, որի մատենագիրն ու ակտիվ մասնակիցն էր նա:

Ավելացնենք, որ Գարուն Ակոպովը ժամանակին սերտ հարաբերություններով էր կապված վիրահայ եւ հատկապես թբիլիսահայ հասարակության հետ, նրա տանը հաճախ էին հյուրընկալվում հայկական թատրոնի դերասաններ Պահարեն, Ռաֆիկ Պապովյանը...

Վրաց մարզական ժուռնալիստիկայի ասպարեզում արժանվույնս գնահատվեց Գարուն Ակոպովի արգասաբեր գործունեությունը: Նրան շնորհվեց Վրաստանի վաստակավոր լրագրողի, ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործչի, բասկետբոլի միջազգային կարգի դատավորի կոչում: Նա ճանաչվել էր լրագրողական մի շարք մրցանակների դափնեկիր: Մասնագիտական եւ հասարակական գործունեությունում բացառիկ ծառայությունների համար նա պարգեւատրվել էր Պատվո շքանշանով:

Այլեւս հավերժի ճամփորդ ես... Շնորհակալություն այն ամենի համար, ինչ դու արեցիր մեր մասնագիտության համար, թանկագի'ն գործընկեր:

*ՎՐԱՍՏԱՆԻ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ*

*Ստանալով Գարուն Ակոպովի մահվան լուրը՝ 1953 թվականից Գարուն Ակոպովի հետ սերտ բարեկամական կապերով կապված, Խորհրդային Միության սպորտի վաստակավոր վարպետ, վաստակավոր մարզիչ, Խորհրդային Միության բազմակի եւ Օլիմպիական խաղերի չեմպիոն, «Ոսկե Արարատի» (1973) գլխավոր մարզիչ Նիկիտա Սիմոնյանը կապվեց 1973 թվականին «Սովետսկի սպորտ» թերթի հայաստանյան սեփական թղթակից, ներկայումս «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի հետ եւ նրան՝ որպես Ակոպովների ընտանիքի մերձավոր բարեկամ, խնդրեց՝ իր խոր վշտակցությունն հայտնել հանգուցյալի ընտանիքին:*

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# TBC-Ն ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՀԵՌԱՎԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ

*TBC-ն սպառողներին առաջարկում է մասնաճյուղեր գալու փոխարեն, տանից կամ գրասենյակից բանկային գործողություններն իրականացնել հեռավար:*




TBC-ի գործառույթների 95 տոկոսն իրականացնում է թվային ալիքների օգտագործմամբ, հետեւաբար բանկն ունի հնարավորություն սպառողներին սպասարկումներ մատուցել օնլայն ալիքների միջոցով:

Հեռավար ալիքներով՝ մոբայլ եւ համացանց բանկի օգնությամբ, հնարավոր է ստանալ հետեւյալ սպասարկումները.

* գումարի փոխանցումն անձնական բջջային կամ հաշվեհամարով

* կոմունալ հարկերի վճարումը կամ խմբավորումն ու միասնական վճարումն առանց տանից դուրս գալու

* բանկային քարտի պատվիրում կամ նորացումն ու առանց կանխիկ գումարի օգտագործման, դրամական գործառույթի իրականացում

* թվային քարտի արագ ակտիվացումն ու օգտագործում

* օտարերկրյա տարադրամում գումարի կանխիկացումը լավագույն փոխանակման կուրսով

* քարտի շրջափակումը կամ շրջափակման վերացումը, քարտի պինկոդի վերականգնումը

* բանկոմատից գումարի կանխիկացումը քարտով կամ առանց բանկոմատի առնչվելու, QR կոդի պատճենավորմամբ

* պարեկային եւ կանգառման տուգանքների մուծում

* վարկի ստացում կամ դեպոզիտի բացում:

Սպառողների եւ աշխատակիցների անվտանգության շուրջ հոգատարությունը TBC-ի համար գլխավոր առաջնահերթությունն է: Հենց այդ պատճառով, առկա մարտահիրավերների պայմաններում, սպառողների կենսապայմանների բարելավման նպատակով, բանկը մի շարք սպասարկումներ փոխադրել է հեռավար կարգի: Սպասարկումների թվայնության ուղղությամբ թիմն ակտիվ աշխատում է եւ սպառողներին մշտապես կառաջարկի նորություններ:

# ԱՆՑՈՒՄ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ




*TBC-ն անցնում է բացարձակապես նոր բանկ-դուրսգրման մոդելի: Այսուհետեւ, սպառողները հնարավորություն կունենան իրենց պահանջներին համապատասխան, դուրս գրել երեք տիպի հավաքածուներից որեւէ մեկը՝ հավաքածու 2L, հավաքածու 5L եւ հավաքածու 10L: Յուրաքանչյուր հավաքածուն առաջնային է, հաճախ օգտագործվող եւ երկրորդական տեսակի պահանջները միավորում եւ ընտրությունը կատարում է ըստ սպառողների ցանկության:*

Ցանկալի հավաքածուի դուրսգրումը շատ պարզ է՝ www.tbccard.ge կայք-էջով կամ TBC-ի ցանկացած մասնաճյուղ այցելելով:

Դուրսգրման բիզնես-մոդելի ներդրմանը զուգընթաց, TBC-ին թողարկել է վեց տարբեր գույնի նորացված դիզայնով ուղղահայաց ձեւաչափի վիզա գոլդ քարտ, որը սպառողը կարող է ընտրել՝ ելնելով իր ցանկությունից: Քարտերի հանձնումը Վրաստանի ողջ տարածքում անվճար է:

Լրացուցիչ տեղեկատվություն հնարավոր է ստանալ www.tbccard.ge կայք-էջից:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ



*Հոկտեմբերի 19-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ անցկացվեց Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ:*

Բացի Անվտանգության խորհրդի անդամներից, նիստին մասնակցում էին նաեւ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցը, «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Արման Աբովյանը:

Անվտանգության խորհրդի նիստը սկսվել է Ամենայն Հայոց կաթողիկոսի աղոթքով:

Նիստի ընթացքում քննարկվել են ադրբեջանա-թուրքական ագրեսիայի հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակն ու հակառակորդին հակազդելու ուղղությամբ իրականացվող քայլերը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆ Ի ՎԵՐՋՈ ՊԵՏՔ Է ԱՍԻ ԻՐ ԾԱՆՐԱԿՇԻՌ ԽՈՍՔԸ

*Արցախա-ադրբեջանական շփման ողջ գծի երկայնքով սեպտեմբերի 27-ին սկսված ռազմական դիմակայությունը շարունակվում է:*

Ի տարբերություն նախորդ տարիների, դիմակայության գոտում տեղի ունեցող ընդհարումների, ներկայիս դիմակայությունը աչքի է ընկնում ոչ միայն լայնածավալ, ռազմական տեխնիկայի լիարժեք օգտագործման առումով, այլեւ երրորդ` արտաքին ուժի ակնհայտ մասնակցությամբ: Թուրքիան, որը նախորդ ընդհարումներին, թեկուզեւ ձեւական, պահպանում էր չեզոք դիրք, այս անգամ բացահայտ պաշտպանում է Ադրբեջանին, աջակցում` սպառազինությամբ, ռազմական մասնագետներով: Նաեւ Սիրիայում, Աֆղանստանում եւ այլուր վարձում ահաբեկիչների Արցախում ռազմական գործողություններին մասնակցելու համար: Երկու կողմերն էլ կրում են մարդկային եւ տեխնիկայի նշանակալի կորուստներ:

Միջազգային հանրությունը, հանձինս ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների, ջանքեր են գործադրում ռազմական գործողությունների դադարեցման ուղղությամբ: Մասնավորապես, Ռուսաստանի ջանքերով հոկտեմբերի 10-ին հայտարարվեց հրադադար, որը սակայն րոպեներ անց խախտվեց Ադրբեջանի կողմից: Նույնը վիճակվեց նաեւ հոկտեմբերի 18-ին արդեն Ֆրանսիայի ջանքերով ձեւակերպված հրադադարի համաձայնությանը: Ադրբեջանի կողմից անտեսվեց նաեւ Մինսկի խմբի համանախագահ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը:

Ակնհայտ է, որ միջազգային հանրությունը պետք է ավելի գործուն միջոցներ ձեռնարկի հարցի կարգավորման համար:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է 24-ԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՎ

*Ինչպես տեղեկացրել են Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից, ռազմական դրության պայմաններում առավել քան ընդգծվում է ռազմարդյունաբերական կոմիտեի (ՌԱԿ) կողմից իրականացվող գործունեության կարեւորությունը, որն այս օրերին աշխատում է` օգտագործելով արտադրական բոլոր հզորությունները:*

Գիտակցելով ողջ պատասխանատվությունը` ՌԱԿ ընկերությունները 24/7 ռեժիմով իրականացնում են բազմաբնույթ աշխատանքներ` վնասված զինտեխնիկայի վերանորոգումից մինչեւ հարվածային եւ պաշտպանական միջոցների արտադրություն, նմուշների ռազմական իրավիճակներում փորձարկումներից մինչեւ նոր խնդիրների լուծում:

Ռազմարդյունաբերական մի շարք ընկերություններում տրամադրվում են վերանորոգման եւ արտադրական ծառայություններ, որոնք մեծապես նպաստում են զենքի ու զինամթերքի պաշարների համալրմանը ակտիվ գործողությունների ընթացքում:

Նոր սերնդի մշակված եւ կիրառվող ռազմատեխնիկական լուծումները շարունակում են արդիականացվել, կատարելագործվել եւ տրամադրվել գործարկման` հիմքում ունենալով առկա ռազմական խնդիրներն ու հակառակորդի կողմից կիրառվող տեխնոլոգիաները:

## ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԳՐԱՆՑՎԵՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

*Ըստ Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի, հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի եւ սոցիալական վճարի ամսական հաշվարկներում արտացոլված տվյալների հիման վրա, ամփոփվել են 2020 թվականի սեպտեմբեր ամսվա ցուցանիշները:*

Մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի տվյալներով, եկամուտ (հարկման բազա) ապահոված աշխատատեղերի թվաքանակը կազմել է շուրջ 632 հազար, որը 2020 թվականի օգոստոսի համեմատ, ավելի է շուրջ 14 հազարով, իսկ 2019 սեպտեմբեր ամսվա համեմատ` 15,6 հազարով: Միաժամանակ, 2020 թվականի սեպտեմբերին` նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, աճել է նաեւ ընդհանուր հայտագրված եկամուտը (հարկման բազան)` կազմելով շուրջ 126 մլրդ դրամ, նախորդ տարվա 114,6 մլրդ դրամի փոխարեն:

Դրան զուգահեռ, 2020 թվականի սեպտեմբեր ամսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է նաեւ մեկ աշխատատեղին բաժին ընկնող եկամուտը (հարկման բազան)` կազմելով շուրջ 199 հազար դրամ, նախորդ տարվա 186 հազար դրամի փոխարեն:

Հատկանշական է, որ 2020 թվականի սեպտեմբեր ամսվա եկամուտ ապահոված աշխատատեղերի թիվն աննախադեպ է եւ Հայաստանի վիճակագրության պատմության մեջ արձանագրված ամենաբարձր ցուցանիշը:

## ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ ՀԱՐՅՈՒՐ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԳՐԱՎԻ ԴԻՄԱՑ

*Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը: ԲՀԿ ղեկավարը ազատ արձակվեց 100 միլիոն դրամ գրավի դիմաց:*

Գագիկ Ծառուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով` ընտրակաշառք տալու համար: Նա չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը:

Հոկտեմբերի 22-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը դուրս եկավ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկից (հայտնի է որպես Ազգային անվտանգության ծառայության մեկուսարան):

Նա հայտարարեց, որ մի կողմ է դնում իր բոլոր քաղաքական հակասությունները. ներկայումս իր եւ կուսակցության հիմնական խնդիրն է աջակցել Արցախին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմում:

Հիշեցնենք, որ Գագիկ Ծառուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ընտրակաշառք տալու համար: Նա չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը:

Հունիսի 16-ին Ազգային ժողովը փակ քվեարկությամբ հավանություն է տվել պատգամավոր Գագիկ Ծառուկյանին անձեռնմխելիությունից եւ ազատությունից զրկելու վերաբերյալ ՀՀ Գլխավոր դատախազի միջնորդություններին:

### ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐ

***Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կոչին ի պատասխան` մարզերում, համայնքներում ձեւավորվում են կամավորական ջոկատներ առաջնագիծ մեկնելու համար, մարզպետերն ու համայնքապետերն անձամբ են զինվորագրվում:***

***Վարչապետի կոչից հետո, անցկացվեցին մարզերի խորհուրդների արտահերթ նիստեր` ինքնապաշտպանական ջոկատներ ձեւավորելու օրակարգով, որից հետո մարզպետները հանդես եկան հայտարարություններով:***

***Մասնավորապես, կամավորական ջոկատների կազմավորման հայտարարություններով հանդես են եկել Արմավիրի, Լոռու, Տավուշի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի մարզպետերը: Կամավորական ջոկատների կազմավորմանը ձեռնամուխ են եղել նաեւ առանձին քաղաքներն ու համայնքները, մասնավորապես` Երեւանը, Էջմիածինը, Վանաձորը, Ջերմուկը եւ այլն:***

### ՀԱՆԴԻՊՈՒՄ` ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

***Հոկտեմբերի 19-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ:***

***Հանդիպմանը վարչապետն անդրադարձավ ադրբեջանա-թուրքական ագրեսիայի հետեւանքով ստեղծված իրավիճակին, հայկական կողմի քայլերին ու գործողություններին:***

***Կառավարության ղեկավարը պատասխանեց նաեւ մի շարք հարցերի:***

***Արտախորհրդարանական ուժերի հետ ՀՀ վարչապետի նախորդ հանդիպումը կայացել է հոկտեմբերի 12-ին:***

### ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

***Հոկտեմբերի 21-ին կայացավ Հայաստանի եւ Արցախի նախկին նախագահների հանդիպումը: Այս մասին «Ֆեյսբուք»-յան իր էջում գրել է ՀՀ առաջին նախագահի մամուլի խոսնակ Արման Մուսինյանը:***

***«Տեղեկացնում եմ, որ Արցախի եւ Հայաստանի ներկա մտահոգիչ իրավիճակով պայմանավորված` տեղի է ունեցել եւս մի խորհրդակցություն, որին այս անգամ մասնակցել են Հայաստանի Հանրապետության նախկին նախագահներ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը եւ Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը»,- գրել է Մուսինյանը:***

***Ավելի վաղ, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպել էր Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանի եւ Բակո Սահակյանի հետ:***

### ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

***Հայաստանում, Արցախում, հայկական Սփյուռքում շարունակվում է Արցախի պաշտպանական բանակի եւ արցախցիների օգնության դրամահավաքը:***

***Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 21-ը նվիրաբերվել է 4 մլն 500 հազար ԱՄՆ դոլար: Նվիրաբերություններն իրականացվել են աշխարհի 60 երկրից: Հայերն աշխարհի 60 երկրից 1 դոլարից մինչեւ 1 մլն ԱՄՆ դոլար գումար են նվիրաբերել «1000+» հիմնադրամին: Ընդհանուր առմամբ, կատարվել է 8 հազար 530 նվիրաբերություն:***

***Բացի այդ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաք-հեռուստամարաթոնը տեղի կունենա նոյեմբերի 26-ին:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



*25.10.2020 Տոն Խաչի Գյուտի*

Խաչի Գյուտը Քրիստոսի խաչափայտին նվիրված չորս տոներից է:

*27.10.2020 Սամոսատում նահատակված Սուրբ Հիպիրիքյանների հիշատակության օր*

*29.10.2020 Հիշատակ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի*

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑ

# ԿՆՈՐԱՑՎԻ ԲԱԹՈՒՄԻ-ԱԽԱԼՑԻԽԵ ՃԱՆԱՊԱՐՀԻ 42 ԿՄ ՀԱՏՎԱԾԸ




*Ինչպես տեղեկացրել է ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտը, ներպետական նշանակության Բաթումի (Անգիսա)-Ախալցիխե ավտոմոբիլային ճանապարհի Խուլո-Զարզմանի 42 կմ ճանապարհահատվածի վերանորոգման-վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով, անցկացված միջազգային մրցույթում հաղթել է «Սինոպ հիդրո» ընկերությունը, որի հետ եւ կնքվել է համաձայնագիրը:*

42 կմ ճանապարհահատվածի վերանորոգումը, որը բաժանվել է երկու առանձին հատվածների, ֆինանսավորում է Արաբիայի տնտեսական զարգացման Քուվեյթի հիմնադրամը: Այդ աշխատանքների համար, ընդհանուր առմամբ, հատկացվում է 95 689 302 լարի: Նախագծի իրականացման համար կպահանջվի երկու տարի:

Գերատեսչության տեղեկատվությամբ, զուգահեռաբար ակտիվ աշխատանքներ են տարվում Խուլո-Զարզմանի ճանապարհի մնացած 5 կմ հատվածի վերանորոգման համար: Այն ֆինանսավորվում է պետական բյուջեից: Ընդհանուր առմամբ, Բաթումի-Ախալցիխե ճանապարհի վրա կվերանորոգվի 47 կմ հատված եւ կկարգավորվի յոթ կամուրջ: Ծրագրվում է, որ ճանապարհը կլինի երկշերտ ասֆալտբետոնե ծածկով:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# «ԿԱՐՖՈՒՐԻ» ՎԵՐՆԱՀԱՐԿՈՒՄ ԿԳՈՐԾԻ «ԿԱԼԽՈԶՆԻ» ԿԱՄ, ԻՆՉՊԵՍ ԱՍՈՒՄ ԷԻՆ, «ՍԱԼԴԱՏՍԿԻ ԲԱԶԱՐԸ»

*Թբիլիսիի Աթոնելի փողոցում, թիվ 104 դպրոցի եւ «Վրաստան» թերթի խմբագրության հարեւանությամբ, նախկին Կոլտնտեսային շուկայի տարածքում, «Կարֆուրի» վերնահարկում կկարգավորվի մուլտիգործառութային ագրոառեւտրի կենտրոն:*



Ինչպես պարզվեց, նախագծի դրույթը նախագծում է առաջին եւ երկրորդ հարկում Ֆուդկորդի կարգավորում, որտեղ մեկ տարածքում կտեղակայվեն առեւտրական տաղավարներ, կվաճառվեն պատրաստի եւ անմիջականորեն տեղում պատրաստվող ապրանքներ, իսկ համապատասխանաբար երրորդ եւ չորրորդ հարկերում կտեղակայվեն ճաշարաններ:

Ճարտարապետության կայք-էջում տեղակայված բացատրական տոմսակում նշված է, որ Եվրոպայի շատ քաղաքներում, որպես օրենք, նման օբյեկտները հաջողությամբ գործում են հին շուկաների տարածքներում: Փաստաթղթում նաեւ նշված է, որ առեւտրական կենտրոնում կներկայացվեն բազմաբնույթ ապրանքներ: Նույն տեղեկատվությամբ, ելնելով շինության պատմությունից եւ տեղադրավայրից, օբյեկտը հետաքրքիր կլինի ինչպես քաղաքի բնակիչների, այնպես էլ՝ զբոսաշրջիկների համար: Ինչպես նշված է բացատրական տոմսակում, շենքը կառուցվել է 20-րդ դարի 40-ական թվականներին: Խորհրդային ժամանակահատվածում այդտեղ գործում էր «Կալխոզնի բազարը», իսկ ավելի ուշ՝ առեւտրի կենտրոնը: Շինությունն ունի երեք մակարդակ: Այսօրվա դրությամբ, առաջին հարկում գործում է «Կարֆուր» սուպերմարկետը, ինչ վերաբերում է երկրորդ հարկին, որը ներառում է նաեւ անտրիսոլը, այն մնում է առանց գործառույթի:

Շենքը պատկանում է «Վրաստանի առեւտրական կենտրոն» բաժնետիրական ընկերությանը, որի տնօրեն Թաթա Սախելաշվիլին նշեց, որ ընկերությունը տարածքը վարձակալել է: Նախագծի ենթադրական պատվիրատուն «Մերկադո» ՍՊԸ-ն է, որը 2020 թվականի հունիսի 27-ին «Շինության կառույցի անվտանգության կարգի հաստատման մասին» շենքի գնահատման համապատասխան պահանջով դիմել է «Դիսի գրուպ» ՍՊԸ-ին:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

# ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՀԱՐԳԱՐԺԱՆ ՏՆՕՐԵՆ



Հոկտեմբերի 18-ին լրացավ Բորժոմիի մունիցիպալիտետի Տաբածղուրիի գեղատեսիլ լճի ափին տեղաբաշխված Մոլիթ գյուղի հանրային դպրոցի տնօրեն Ալբերտ Հարությունյանի 54-ամյակը:

1988 թվականին էր, երբ բարձրագույն կրթություն ստանալուց հետո, նա նախ որպես վրաց լեզվի եւ գրականության ուսուցիչ, իսկ 2020 թվականից՝ որպես տնօրեն, անցավ աշխատանքի այդ կրթօջախում:

Եվ ահա երեսուներեք տարի է, ինչ նա առանց ընդմիջումների շարունակում է իր աշխատանքային գործունեությունը՝ ջանք ու եռանդ չխնայելով դպրոցի կայացման համար, եւ արդյունքում, չնայած գտնվում ենք բարձր լեռնային շրջանում եւ փոքրաթիվ ենք. 25 աշակերտով, 12 ուսուցչով եւ մի քանի տեխնիկական աշխատողով, հիմա մենք ունենք բոլոր չափորոշիչներին համապատասխանող դպրոց: Այս ամենի համար մենք երախտապարտ ենք մեր տնօրենին, շրջանի ղեկավարներին եւ Վրաստանի կրթության նախարարությանը:

Ծնունդդ շնորհավո՜ր, հարգարժան տնօրեն: Մաղթում ենք առողջություն եւ անսպառ եռանդ, աշխատանքային վերելքներ:

*Մոլիթ գյուղի դպրոցի աշխատակազմի անունից՝*
***ԽՆԿԱԲԵՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ***

***«Վրաստան» թերթի խմբագրությունը միանում է շնորհավորանքին, մաղթում քաջառողջություն, երկար կյանք, հաջողություններ նրան՝ իր պատասխանատու եւ շնորհակալ գործում:***



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Նեպալի մայրաքաղաքը: 5.Հռիփսիմյան կույսերից: 10.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված հայ գրող: 11.Լեռ Հայաստանում: 12.Հրազդան քաղաքը հնում: 13.Բայի ժամանակ: 14.Արմեն Տիգրանյանի օպերաներից: 15.Բանջարանոցային բույս: 17.Պայտ, ձիու ոտնաման (ժող.): 20.Ռ.Պատկանյանի պատմվածքներից: 22.Հազարը հայոց այբուբենի տառերով: 23.Ինքնավար Հանրապետություն Վրաստանում: 25.Կարճ ու ...: 27.Պատմավիպասան Րաֆֆու իսկական անունը: 30.Հեքիաթ՝ «... Հասանի մաշիկները»: 31.Գյուղատնտեսական գործիք: 32.Վանքային համալիր Հայաստանում: 35.«Մայրը»՝ Լոռիում: 37.Հայոց Ծովինար աստվածուհու անուններից: 38.Կաթնամթերք: 39.Առաջին ձայնանիշը: 40.Երեւանում լույս ընծայվող լրագիր: 43.Ընտանի կենդանին (ժող.): 45.Իրաքյան քաղաք: 47.Ցուցական դերանուն: 49.Ունկնդրել, ականջալուր լինել: 50.Լեռնագագաթ Հայաստանի Սյունիքի մարզում: 52.Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսներից: 53.Անձնական դերանուն: 54.Ռուս մեծ գրող Լեւ Տոլստոյի երկերից՝ «... Կարենինա»: 56.Հայկական հնագույն գինի: 57.Վրաց գրող Շ.Ռուսթավելու հերոսուհի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.«Անտունի», «Կռունկ» երգերի հեղինակը: 2.Ժամանակի միավոր: 3.... կամ ԼՂՀ-ը: 4.Ավան Ուկրաինայի Դոնեցկի մարզում: 6.Քաղաք Վրաստանում: 7.Ռուս գրող Ա.Պուշկինի դայակը: 8.Գրական ստեղծագործություն: 9.Հայաբնակ գյուղ Վրաստանի Մառնեուլիի շրջանում: 12.Գրողի կողմից գովերգված գյուղ Հայաստանում: 16.Տարվա եղանակ: 18.Թռչնի տեսակ: 19.Արաբական պետություն Ասիայում: 21.Հարցական դերանուն: 22.Մարոկկոյի քաղաքամայրը: 23.Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպանը Ֆրանսիայում Ավետիս ...յան: 24.Առաստաղից կախվող լուսատու առարկա: 26.Հաճելի գույն: 28.Կարմիր եւ սպիտակ թելերով հյուսվածք: 29. Յոթերորդ նոտան: 33.Ջրային փոխադրամիջոց: 34.Հետադաս կապ: 36.Տղամարդու երգչաձայն: 39.Գյուղ Վրաստանի Ասպինձայի շրջանում: 41.Մուրացանի դրաման: 42.Թբիլիսիի քաղաքապետ Կախա ...: 44....գիծ, ...յին: 46.Հովհ.Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա գրված օպերա: 47.Ֆրանսիայի գետերից: 48.Ղ.Աղայանի գյուղը՝ Բոլնիս-...: 51.Իսպանացի հանրահռչակ նկարիչ: 55.Մակերեսի չափման միավոր:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մաքսիմում: 8.Ողողել: 9.Ճամփեզր: 10.Մասամբ: 14.Գրվանքա: 18.Զազրելի: 20.Վարսանդ: 22.Քիթ: 23.Ժան: 24.Ուգրո: 29.Սերտ: 31.Աֆրիկացի: 33.Դեմք: 35.Բառ: 37.Պատահար: 39.Ելամ: 40.Նեղ: 41.Մետր: 42.Նիֆ: 45.Մոնղոլ: 48.Ճեմուղի: 51.Շաքի: 52.Արար: 53.Ծպտյալ: 54.Մուտանտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Անճար: 3.Սամբա: 4.Մթերք: 5.Մորմ: 6.Կոմս: 7.Ձերմ: 11.Անզոր: 12.Ալեք: 13.Բլիթ: 14.Գովք: 15.Վարժ: 16.Նշան: 17.Ազդու: 19.Լիտր: 21.Սարիթաղ: 25.Գրիմ: 26.Ոստ: 27.Աֆղան: 28.Բադամ: 30.Տառ: 32.Ցերեկ: 34.Քերծե: 35.Բանդուրա: 36.Ամի: 38.Տերն: 43.Ֆլիրտ: 44.Բոշա: 46.Ոսպ: 47.Լալ: 48.Ճիմ: 49.Մատ: 50.Ղան:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445